



Ն Ա Խ Ա Բ Ա Ն

«Հայ ժողովրդական հեքիաթների», գիտական հրատարակության VIII հատորն ընդգրկում է պատմական Հայաստանի՝ Մեծ Հայքի Գուգարք նահանգի բնակավայրերի (այժմյան Թումանյանի, Գուգարքի, Ստեփանավանի, մասամբ Սպիտակի ու Նոյեմբերյանի, ինչպես նաև Վրացական ՍՍՀ Մարնեուլի, Բոլնիսի շրջանների) հեքիաթները:

Հատորը պարունակում է 139 հեքիաթ, որից միայն 17-ը տպագրված են հղել, իսկ մնացած 129-ը՝ անտիպ են: Այս հատորի նյութերի ճնշող մեծամասնությունը գրի են առել լոռու գյուղերում՝ վաստակաշատ ազգագրագետ Եր. Լալայանը՝ ինքն անձամբ և իր գլխավորած 1915—1916 թթ. բանահյուսական նշանավոր խմբարշավի մասնակիցները: Եր. Լալայանի գրառումները արժեքավոր ու կարևոր են և՛ լեզվա-ոճական անաղարտությամբ ու գեղարվեստական բարձր մակարդակով, և՛ միաժամանակ հեքիաթներին կից տրվող անհրաժեշտ տեղեկություններով: Ուշագրավ են նաև Վրեն Տաշրացու (Վերանյան) գրառումները Ջալալօղլու (Ստեփանավանի) գյուղերից: Մեր օրերի գրառումներից հատորում տեղ են գտել Մ. Հակոբյանի, Ա. Ստեփանյանի և Ա. Կարապետյանի հավաքած նյութերը՝ Ալավերդու (Թումանյանի), Ստեփանավանի, Սպիտակի և Նոյեմբերյանի շրջանների գյուղերից:

Սույն հատորի «Գուգարք» խորագիրը ավելի լայն է, քան ընդգրկված նյութը։ Այստեղ ներգրավված է ներկայիս լոռու աղագրական շրջանի տարածքը, որ համապատասխանում է պատմական Հայաստանի Տաշիր(ք) կամ Տաշրատափ գավառին։ Վերջինս մտնում էր Հայաստանի հյուսիսային բզեշխության Գուգարաց աշխարհի մեջ։ Պատմական Գուգարքը բռնում էր բավական ընդարձակ տարածություն։ Հյուսիսից նրա սահմաններն էին՝ Վիրքը, հարավից՝ Այրարատը, արևմուտքից՝ Տայքը, իսկ արևելքից՝ Ուտիքը։

Գուգարքը հարուստ ու հին պատմություն ունի։ Գուգարաց աշխարհում շատ վաղ ժամանակներից բնակվել են հայեր, վրացիներ, իսկ արևելյան ծայրագավառներում՝ նաև որոշ թվով աղվաններ։

Գուգարքը հայկական պետության կազմում հիշվում է Արտաշես Ա-ի օրոք (189—160 թթ. մթա)։ Հայաստանի առաջին բաժանման ժամանակ (387 թ.) Գուգարքը միացվում է Վրաստանի մարզպանությանը և ենթարկվում Սասանյան Պարսկաստանի գերիշխանությանը։ Այդ ժամանակից էլ Գուգարքի վրացաբնակ շրջանները ընդմիշտ մնում են Վրաստանի կազմում, իսկ հայաքրնակ շրջանները՝ Տաշիրք գավառն իր շրջակայքով, Բագրատունիների օրոք կրկին միացվում են հայկական թագավորությանը։

Տաշիրքը Գուգարքի ամենաընդարձակ գավառն էր։ IX դարից սկսած այստեղ իշխում էր Բագրատունիների մի ճյուղը, որը աստիճանաբար ընդարձակում է իր իշխանության սահմանները ու հզորանում։ 978 թ. Բագրատունիների այս ճյուղից Գուրգենը, որ կրում էր տեղական Կորիկե անունը, իրեն թագավոր է հռչակում։ Այս նոր թագավորությունը կոչվում էր Կորիկյան կամ Տաշիր-Ձորագետի (լոռու) թագավորություն, որի մայրաքաղաքը Լոռին էր։

Լոռի կամ Լոռե բերդաքաղաքը կառուցվել է X դարի 2-րդ կեսին։ Այն անառիկ դիրք ուներ և լեռնային ճանապարհով կապված էր մի կողմից Անիի, իսկ մյուս կողմից՝ Թիֆլիսի հետ։ X—XIII դարերում, գյուղատնտեսությունից բացի, Լոռում մեծ զարգացում էր ստացել արհեստագործությունն ու առևտուրը, որը վապված էր նաև պղնձի հանույթի, ձուլման ու մշակման հետ։ Տաշիր—Ձորագետի կամ Լոռու թագավորությունը իր գոյությունը պահպանում է մինչև XIII դարը։ XIII դարում Հայաստանը մոնղոլների կողմից գրավվելով՝ 1236 թ. ավերվում է նաև Լոռի բեր-

դաքաղաքը, որն այդ ժամանակ պատկանում էր Զաքարյան իշխաններին:

Լոռու բնակչությունը երկար ժամանակ կրել է Հայաստան ներխուժած սելջուկյան և ապա մոնղոլական նվաճողների ասպատակությունները, մաքառել ու պայքարել նրանց դեմ:

XVI դարի սկզբից սկսվում է Թուրք-պարսկական պատերազմների առաջին շրջանը, որն ավարտվում է 1555 թ. հաշտության պայմանագրով, ըստ որի Հայաստանի խոշորագույն մասը՝ Արևմտյան Հայաստանը, անցնում է Թուրքիային, փսկ փոքր մասը՝ Արևելյան Հայաստանը, Պարսկաստանին: Այդ նույն դրույթները վերահաստատվում է Թուրքիայի և Պարսկաստանի միջև երկարատև պատերազմից հետո 1639 թ. կնքված հաշտության պայմանագրով և շարունակվում է մինչև XIX դարի քսանական թվականները, երբ Արևելյան Հայաստանը 1828 թ. միացվում է Ռուսաստանին: Լոռին, Ղարաբաղը, Զանգեզուրը դրանից առաջ էին միացվել ռուսական կայսրությանը: Այնուհետև Լոռին տարբեր ժամանակներում մտնում է ցարական ինքնակալության զանազան վարչատերիտորիալ բաժանմունքների մեջ (Թիֆլիսի նահանգ, Բորչալուի գավառ և այլն):

Իր աշխարհագրական դիրքով, կլիմայով, Լոռին հայկական բնաշխարհի գեղեցիկ անկյուններից մեկն է: Այն հարուստ է բարձր լեռներով, խոր կիրճերով, թավուտ անտառներով, առատ բուսականությամբ ու կենդանական աշխարհով: Լոռում են զբոսնում Հայաստանի պատմական ու ճարտարապետական շատ նշանավոր հուշարձաններ ու կոթողներ, ինչպիսիք են՝ Օձունի, Սանահնի, Հաղբատի, Քոբայրի, Դաեղի Բարձրաքաղ Ս. Գրիգորի, Հնեվանքի, Խորակերտի և ուրիշ այլ վանքերն ու եկեղեցիները, Գրիգոր Տուտեորդու դամբարանը, Սմբատ իշխանի մահարձանը, Սանահնի կամուրջը և այլն: Լոռին տվել է պատմական, քաղաքական ու մշակութային նշանավոր շատ գործիչներ:

Լոռու բնակչության ազգագրական կազմը արտագաղթների ու ներգաղթների պատճառով ժամանակի ընթացքում բավականին փոփոխվել է: Տեղաբնիկ շերտի հետ ձուլվել են Հայաստանի ազգագրական այլ շրջաններից եկած բնակչության շերտեր: Այս խմաստով տնտեսական, հոգևոր ու մշակութային գծերով Լոռին առնչվում է Ղարաբաղին, Արցախ—Ուտիքին, մասամբ նաև՝ Շիրակին: Լեզվի-բարբառի տեսակետից Լոռու խոսվածքը պատկանում է Ում ձյուղի Այրարատյան կամ Երևանի բարբառի խմբին:

Միասնական լինելով հանդերձ՝ Լոռու խոսվածքի մեջ նույնպես նկատելի են բարբառային, քերականական ու հնչյունաբանական տարբեր շերտեր, որոնք արդյունք են պատմական տեղական ժամանակաշրջանում տարբեր տեղաշարժերի ու միավորումների:

Լոռու հեքիաթները հարուստ են հրաշապատում (կախարդական) սյուժեներով ու մոտիվներով, որը վկայում է նրա բնակչության մեջ դարերի ընթացքում պահպանված ու փոխանցված աշխարհըմբռնման, հավատալիքների հնադույն դժերի մասին: Լոռու հեքիաթները գեղարվեստական-արտահայտչական ուրույն երանգներ ունեն, որոնք անդրադարձնում են այդ աղագրական շրջանի բնակչության հոգեբանության և բնավորության կոլորիտն ու առանձնահատկությունները:

Ինչպես նախորդ հատորներում, այս հատորում ևս պահպանված են «Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության համար ընդունված բնագրագիտական ընդհանուր սկզբունքները:

1. Պահպանվում է հեքիաթների պատումների ամբողջականությունը: Բնագրերի նկատմամբ խմբագրական որևէ փոփոխություն (հապավում, հավելում և այլն) չի կատարված: Ասացողների «սխալները»՝ սյուժետային գծից խոտորումներ, դեպքերի, դեմքերի, թվերի շփոթում և այլևայլ անհամաձայնություններ, չեն ուղղված, բայց դրանց մասին նշվում է ծանոթության կարգով: Հեքիաթների վերնագրերը թողնված են այնպես, ինչպես սկզբնաղբյուրներում են, իսկ անվերնագիր լինելու դեպքում՝ վերնագրերը նշանակվում են և արդ մասին նշվում ծանոթության կարգով:

2. Հեքիաթների լեզուն չի փոփոխված, այսինքն թողնված է այնպես, ինչպես գրի է առել բանահավաքը ասացողից՝ պահպանելով, սակայն, նոր ուղղագրությունը: Նույն ասացողի պատումներում հանդիպող միևնույն բառերի տարբեր գրությունները պարձվում են միօրինակ՝ հենվելով բարբառագիտական ճշգրիտ ձևի վրա:

3. Ծղգրտված և ուղղված են բնագրերի տրոհության և առաջանության նշանները, պարբերությունների և երկխոսությունների քաժանումը, ուղղակի խոսքերի կիրառումները:

4. Բացի հատուկ անուններից, բնագրերում մեծատառերով են դրվում կենդանական ու բուսական աշխարհի առանձին ներկայացուցիչների անունները, որոնք հեքիաթներում հանդես են

բերվում որպես գործող անձինք, ինչպես նաև հերոսներին տրված մականունները:

5. Սկզբնաղբյուրներում հանդիպող՝ բանահավաքների ընդմիջարկումները (հարձակոթքների ու արտահայտությունների բացատրություններ, առանձին դեպքերի ու դրվագների մեկնաբանություններ և այլն) առանձնացված են բուն բնագրից և տրված են տողատակում՝ համապատասխան ծանոթությամբ: Բնագրերում հանդիպող բարբառային և տեղական բառերի բացատրությունները հանված են և տրված վերջում, ընդհանուր բառարանում:

Այս ընդհանուր սկզբունքների ու կանոնների կիրառմանը զուգընթաց հաջվի են առնված հատորի նյութերի առանձնահատկությունները:

Ներկա հատորի բնագրերի հիմնական բաժինը կաղմում են բուն Տաշիրքի (Լոռու) հեքիաթները: Հեքիաթների տեղաբաշխումը նպատակահարմար գտնվեց կատարել ըստ առանձին միկրոշրջանների: Սկզբում դրված են Թումանյանի (նախկին Ալավերդու), Ստեփանավանի, ապա Նոյեմբերյանի շրջանների հեքիաթները: Միկրոշրջանների ներսում էլ հեքիաթները խմբավորված են ըստ առանձին բանահավաքների գրառումների, վերջիններս էլ դասավորված են ըստ տեսակների (հրաշապատում, արկածային, կենցաղային, երգիծական-զավեշտական և այլն): Խմբավորման հիշյալ սկզբունքը հնարավորություն է տալիս դիտելու հեքիաթների ոճական միասնությունը, ազգագրական, տեղագրական ու գեղարվեստական առանձնահատկությունները:

Թումանյանի շրջանի բնակավայրերի հեքիաթների մեջ ըստ գրառման ժամանակի վաղագույնը Տիգրան Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթներին» V և X պրակներում տպագրված Շնող գյուղի (Հմայակ Մաթինյանցի գրառած) և Օձուն գյուղի (Անուշավան Աբովյանի գրառած) 8 հեքիաթներն են: Տ. Նավասարդյանցի հրատարակած բնագրերում նկատվում է բարբառի քերականական և հնչական յուրահատկությունների պահպանման ձգտում: Այս բնագրերում կան Թիֆլիսի բարբառին առանձնահատուկ մի քանի բառաձևեր (կոնեմ, կոնես և այլն):

Թումանյանի (Ալավերդու) շրջանի հեքիաթների գերակշռող մասը բաղմավաստակ ազգագրագետ-բանահավաք Երվանդ Լալայանի 1915—1916 թթ. բանահյուսական խմբարշավի անտիպ նյութերն են՝ 40 հեքիաթ, որոնցից 30-ը գրի է առել ինքը՝ Եր. Լալայանը, իսկ 10-ը՝ խմբարշավի անդամներ Ն. Մարտիրոս-

ջանը, Եր. Պեղազյանը, Մ. Տապաղյանը (Վեսպեր) և Ս. Շալջյու-
նը, Եր. Լալայանի գրառումները համեմատաբար անաղարտ ու
բարձրորակ են՝ Լոռու բարբառի քերականական, հնչական ու
ոճական առանձնահատկությունների պահպանմամբ: Խմբաընթացի
մյուս անդամների դրի առած հեքիաթների մեջ որոշակի նկատ-
վում է Արևմտյան Հայաստանի մի քանի բարբառների ազդեցու-
թյունը (Մուշ, Վան), որոնց կրողներն են եղել վերոհիշյալ բանա-
հավաքները. Հիշյալ բնագրերի մեջ վատարված են միայն խիստ
անհրաժեշտ ուղղումներ, որոնք կնպաստեն բնագրի իմաստի ճիշտ
ընկալելուն, մյուս խաթարումները թողնված են՝ պատկերացում
կազմելու բանահավաքչական աշխատանքների իրական վիճակի
մասին:

Թումանյանի շրջանի հեքիաթների մյուս նշանակալից հատ-
վածը վաստակավոր ուսուցիչ-բանահավաք Մուշեղ Հակոբյանի
1930—1940-ական թթ. կատարած գրառումներն են՝ թվով 32:
Մ. Հակոբյանի գրի առած հեքիաթները նույնպես արժեքավոր են
բանահյուսական-բարբառային առանձնահատկությունների պահ-
պանման տեսակետից: Դրանց մեջ առանձնահատուկ արժեք են
ներկայացնում Ալավերդու շրջանի Աթան գյուղի նախկին բնակիչ
90-ամյա Եղսում տատի հեքիաթները (թվով 20): Այդ նյութերը
հեքիաթագիտության համար կարևոր են՝ ասացողի և նրա պատ-
մած նյութի վապի ու փոխառնչության հետազոտման տեսանկյու-
նից: Մ. Հակոբյանը այդ առթիվ ժամանակին հրատարակել է
հետաքրքրական մի հետազոտություն բանասաց Եղսում տատի
մասին¹:

Թումանյանի շրջանի հեքիաթների բաժնում տեղ են գտել
նաև հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակից,
բանահավաք Արազ Կարապետյանի 1963 թ. Ալավերդու շրջանի
գյուղերում գրի առած 10 հեքիաթները:

Լոռու ազգագրական շրջանի մյուս միկրոշրջանը Ստեփանա-
վանի (նախկին Զալալօղլու) շրջանն է: Հատորում այս միկրոշրո-
շանից ուշագրավ են Վրեն Տաշրացու 7 հեքիաթները: Վ. Տաշրա-
ցին այդ հեքիաթները գրի է առել մինչև 1910թ. (հավաքածուի
տակ դրված է այդ թվականը): 1934թ. նա իր հավաքածուն հանձ-
նել է վաստակավոր մանկավարժ Սիմակին: Այնուհետև այդ հա-

¹ Մ. Հակոբյան, Մի ասացողի կյանքն ու ստեղծագործությունը, Երևանի պե-
տական համալսարանի ուսանողների գիտական աշխատությունների ժողովածու,
№ 2, 1940, էջ 67—102:

վաքածուն մուտք է արվել բանահյուսական արխիվ: Վ. Տաշբացին յուրահատուկ ձևով է կառուցել իր հավաքածուն: Կոչելով այն «Հեքիաթների աշխարհում»՝ պայմանականորեն բաժանել է գիշերների: Հրատարակվող հեքիաթները առաջին գիշերվա զրույցի նյութերն են: Բանահավաքը հիմնականում պահպանում է լոռու բարբառի յուրահատուկ գծերը՝ օգտագործելով նաև գրական և խոսակցական լեզվի ընդհանուր ոճեր ու դարձվածքներ: Վ. Տաշբացին իր հավաքածուին կցել է ներածություն՝ «Հայ ժողովրդական բանավոր գրականության մասին (խոհեր)» և Նախաբանի տեղ՝ «Կյանքը հեքիաթ է, հեքիաթը կյանք» վերտառությամբ:

Ստեփանավանի միկրոշրջանի հեքիաթների շարքում կարևոր տեղ են գրավում լրագրող-բանահավաք Արտավազդ Սաքանյանի 1950—1966 թվականների ընթացքում գրի առած 13 հեքիաթները: Այդ հեքիաթները գրի են առնված բարբառի քերականական, հնչական և ոճական առանձնահատկությունների պահպանմամբ:

Ազգագրական առումով Գուգարքին (լոռուն) հարում են Նոյեմբերյանի և Բուլնիսի շրջանները: Այս բնակավայրերից հատորի մեջ ընդգրկված են Ա. Կարապետյանի 1961թ. գրի առած 6 հեքիաթները: Իրանք պատմված են կիսով չափ խառը գրական լեզվով, որը գալիս է ասացողից: Մեկ տպագիր հեքիաթ վերցված է «Ազգագրական հանդեսի» XI գրքից (1904 թ.), որը կցված էր Եր. Լալայանի «Բորչալուի գավառ» ազգագրական նյութերին:

Սուլյն հատորում տեղ են գտել նաև 1860-ական թվականներին «Մեղու Հայաստանի» պարբերականում լոռուց տպագրված 3 հեքիաթ, Խ. Շահնազարյանի 1894թ. Ղազախի բարբառով գրի առած 3 և Եր. Լալայանի 1926թ. Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղում գրի առած 16 անտիպ հեքիաթները:

Բնագրերից բացի, հատորն ունի.

Մանոթագրություններ, որտեղ հերթականությամբ լուսաբանվում է հատորում տեղ գտած բոլոր հեքիաթների գրառման պատմությունը,

Բառարան, որն ընդգրկում է հատորում տեղ գտած բարբառային դժվար հասկանալի և փոխառյալ բառերի բացատրությունները,

Ցանկեր, որոնք այբբենական կարգով ներկայացնում են հատորում ընդգրկված հեքիաթները՝ ըստ տեղի և ասացողների, հատուկ անունների և առարկայական:

Հատորում հանդիպող համառոտությունների բացատրությունը.

ՔԱ—Քանահյուսական արխիվ Հայկական ՍՍՀ ԳԱ Հնագի-
տության և ազգագրության ինստիտուտի:
ՀՊՊԹ—Հայաստանի պատմության պետական թանգարան
Հայկական ՍՍՀ Կուլտուրայի մինիստրության:
ԾԱ—Ծանոթություն ասացողի:
ԾԲ—Ծանոթություն բանահավաքի:
ԾԿ—Ծանոթություն կազմողի:

